



2017 թվականի դեկտեմբերի 25-ին Վրաստանում հանդիսավորապես նշվեց Համայն Վրաստանի կաթողիկոս-ապատրիարք Սրբազնագույն և Երանաշնորհ Իլիա Բ-ի գախակալության 40 և ծննդյան 85-ամյակը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը շնորհավորական ուղերձ էր հղել Վրաց Ուղղափառ Եկեղեցու հովվապետին՝ փառավոր հոբելյանների առիթով:

Վիրահայոց թեմը Սրբազնագույն և Երանաշնորհ Իլիա Բ-ի գախակալության 40-ամյակին և հայ-վրացական հազարամյակների բարեկամությանը նվիրեց դասական երաժշտության համերգ, որին մասնակցեցին Եվրոպայի տարբեր երկրներից ժամանած երաժիշտներ: Համերգը տեղի ունեցավ Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլիի անվան պետական կոնսերվատորիայի Փոքր դահլիճում:



Դահլիճը լեփ-լեցուն էր: Ներկա էին հայ և վրաց երաժշտասեր հասարակության ներկայացուցիչները:

Իրենց օրինաբեր ներկայությունն էին բերել Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը և Վրաց Ուղղափառ Եկեղեցու Ախալքալաքի ու Գումբուրդոյի, Հարավային Ամերիկայի միտրոպոլիտ Գերաշնորհ Նիկոլոզ Փաչուաշվիլին:

Վիրահայոց թեմի իրավական հարցերի և համագործակցության բաժնի տնօրեն Միքայել Ավագյանը ամփոփ ներկայացրեց հազարամյակների պատմություն ունեցող Հայ Առաքելական և Վրաց Ուղղափառ եկեղեցիների համագործակցությունը և բարեկամությունը: Պատմության քառուղիներում բազմիցս հայտնված երկու հավատավոր ազգերը իրենց առաջնորդների եղբայրական սիրով կերտել են քրիստոնեական մշակույթը և տարածել

Հիսուսի լույս Ավետարանը:



Բանախոսը մեջբերելով Իլիա Երկրորդի թևավոր խոսքերն այն մասին, որ Վրաստանն ու Հայաստանը այս տարածաշրջանում երկու քրիստոնեական օազիսներ են, ընդգծեց որ Համայն Վրաստանի կաթողիկոսը արդեն 40 տարի վրաց ժողովրդի մեջ վառ է պահում հավատքի ջահը: Բանախոս Ավագյանը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձի տեքստը:

Միջոցառման կապակցությամբ շնորհակալության խոսք ասաց միտրոպոլիտ Նիկոլոզ Փաչուաշվիլին: Վերջինս բարձր գնահատեց Վիրահայոց թեմի կողմից Վրաց քրիստոնյա Եկեղեցու հովվապետի հոբելյանները այս ձևով նշելը, արժևորեց Հայ և Վրաց Եկեղեցիների բարեկամությունը, որն ունի դարերի պատմություն և որ այդ համագործակցությունը նոր լիցքով ու հազեցվածությամբ շարունակում է արձանագրվել Սրբազնագույն և Երանաշնորհ Իլիա Բ-ի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի հովվապետությամբ:



Դասական երաժշտության համերգի ընթացքում դաշնակահար Մամիկոն Նահապետյանի, կլարնետահար Դիմիտրի Բոքուիշվիլու և երաժիշտ Հովհաննես Համբարձումյանի կատարմամբ հնչեցին Արամ Խաչատրյանի, Շուբերտի, Կրայսլերի, Շումանի և Հովհաննես Համբարձումյանի ստեղծագործությունները: